Հավելված N 1
ՀՀ կառավարության 2012 թվականի
դեկտեմբերի 27-ի N 1660 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՆՁՆԱԳԻՐԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԿԱՄ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՑԱՆԿՈՒԹՅԱՄԲ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՏՐՎՈՂ՝ ԱՆՁԸ (ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ) ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի N 821 որոշմամբ նախատեսված անձնագիրը (այսուհետ՝ անձնագիր) կորցնելու կամ փոխանակման ներկայացնելու դեպքում քաղաքացու ցանկությամբ ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Անձնագիրը կորցնելու, ինչպես նաև փոխանակման ներկայացնելու դեպքերում, մինչև նոր անձնագրի տրամադրումը, Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող քաղաքացուն, նրա ցանկությամբ, Հայաստանի Հարապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կամ տարածքային անձնագրային ծառայության կողմից տրվում է ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ: Անձնագիրը կորցնելու դեպքում ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ կարող է տրամադրվել նաև այն դեպքում, երբ քաղաքացին անձնագիրը կորցնելու մասին հայտնել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը և, անկախ նոր անձնագիր ստանալու

համար դիմում ներկայացնելու փաստից, ցանկություն է հայտնել ստանալ ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ:

3. Կալանավորված կամ ազատազրկման դատապարտված քաղաքացին ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ ստանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկի վարչակազմի, իսկ հոգեբուժական հիվանդանոցում կամ հոգեբուժական օգնություն տրամադրող այլ հաստատությունում ստացիոնար բուժման մեջ գտնվող քաղաքացիները՝ նշված հաստատությունների վարչակազմի միջոցով: Կարճաժամկետ մեկնում ստացած դատապարտյալը ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ ստանում է ընդհանուր հիմունքներով:

4. Անձնագիրը կորցնելու, ինչպես նաև փոխանակման ներկայացնելու դեպքում ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ ստանալու համար քաղաքացին անձամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն կամ հաշվառման վայրի տարածքային անձնագրային ծառայություն է ներկայացնում դիմում և 35 x 45 մմ չափսի երկու գունավոր լուսանկար: Օրինական ներկայացուցչի միջոցով ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ ստանալու համար դիմումին կցվում են օրինական ներկայացուցչի անձնագրի և օրինական ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթղթի պատճենները: Բնակչության պետական ռեգիստրում հաշվառում չունեցող քաղաքացիները դիմում կարող են ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կամ տարածքային ցանկացած անձնագրային ծառայություն, որի դեպքում ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթում կատարվում է նշում հաշվառում չունենալու մասին:

Կարճաժամկետ մեկնում ստացած դատապարտյալները ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ ստանալու համար ներկայացնում են նաև քրեակատարողական հիմնարկի կողմից տրված կարճաժամկետ մեկնման թույլտվության վկայականը և դրա պատճենը: Վկայականի բնօրինակը պատճենի հետ համեմատելուց հետո վերադարձվում է քաղաքացուն: Դիմումն ընդունող Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կամ տարածքային անձնագրային ծառայության աշխատողը դիմումի դարձերեսին ստորագրում է և նշում իր պաշտոնը, անունը և ազգանունը, ինչպես նաև փաստաթղթի ընդունման ամսաթիվը: Կորած անձնագրի տվյալները (սերիան, համարը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխանցվում են Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ:

5. Կալանավորված կամ ազատազրկման դատապարտված, հոգեբուժական հիվանդանոցում կամ հոգեբուժական օգնություն տրամադրող այլ հաստատությունում ստացիոնար բուժման մեջ գտնվող քաղաքացիներին ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ տրամադրելու համար քրեակատարողական հիմնարկի, հոգեբուժական հիվանդանոցի կամ հոգեբուժական օգնություն տրամադրող այլ հաստատության վարչակազմը սույն կարգի 4-րդ կետով նախատեսված դիմումը և լուսանկարները 1-օրյա ժամկետում ներկայացնում է Հայաստանի Հարապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կամ վարչակազմի գտնվելու վայրի տարածքային անձնագրային ծառայություն:

6. Ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը քաղաքացուն (դիմողին) տրամադրվում է սույն կարգի 4-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացվելուց հետո՝ անմիջապես:

7. Ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը տրամադրվում է մինչև նոր անձնագիրն ստանալու համար նախատեսված ժամկետով, իսկ կորցրած անձնագրի փոխարեն նոր անձնագիր ստանալու դիմում չներկայացնելու դեպքում՝ 15 օր վավերականության ժամկետով:

8. Կարճաժամկետ մեկնում ստացած դատապարտյալներին ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը տրամադրվում է կարճաժամկետ մեկնման թույլտվության վկայականում նշված ժամկետով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թվականի
դեկտեմբերի 27-ի N 1660 - Ն որոշման

_____
(ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության անձնագրային ծառայություն)

_____ _____20 թ. _____
(տալու ամսաթիվը) (դիմումի մուտքի համարը)

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՏՐՎՈՂ՝ ԱՆՁԸ (ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ) ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

(լուսանկար)

Քաղ. _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____
(ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, վայրը)

_____
(հաշվառման հասցեն)

Տրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի N 821 որոշմամբ նախատեսված անձնագիրը կորցնելու կամ փոխանակման ներկայացնելու կապակցությամբ՝ անձի դիմումի հիման վրա (ընդգծել):

Կ. Տ

Փաստաթուղթն ուժի մեջ է մինչև _____ _____20 թ.

Անձնագրային ծառայության պետ _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

12_1660